Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանրային (կամ պետական) ֆինանսների կառավարումը հիմնականում իրականացվում է երկրի անվտանգության ապահովման, իրավական համակարգերի գործունեության, կրթության, գիտության, բնակչության սոցիալական պաշտպանության, առողջապահական ծառայությունների տրամադրման, բնապահպանության և մի շարք այլ ոլորտներում պետության պարտադիր գործառույթների ապահովման նպատակով: Այն կոլեկտիվ շահերի համար անհրաժեշտ միջոցների հավաքագրման և հանրային նշանակության խնդիրների լուծման համար գումարների ծախսման գործընթաց է, որի վերջնական և խոշոր նպատակն է երկրում երկարատև տնտեսական աճի ապահովումը ու բնակչության սոցիալական պաշտպանվածությունը:

Այս գործառույթն ունի պարտադիր բնույթ ու անկախ պետության տնտեսական համակարգի ձևից, զարգացման տեմպերից և ուղղություններից այն կայուն է և գրեթե անփոփոխելի:

Մյուս կողմից, ժամանակակից աշխարհում ավելանում և փոփոխվում են տնտեսական հարաբերությունների վեկտորները և շղթայական գործընթացները: Հասարակության կյանքում գիտական, արտադրական և տեխնոլոգիական նվաճումները ավելի ու ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում հանրային բարիքներից օգտվելու համար, որոնց մի մասը (հիմնականում՝ բոլորի համար պարտադիր բարիքները) ապահովվում է պետության կողմից՝ բյուջետային միջոցների հաշվին: Այս իմաստով թե՛ բյուջետավորման գործառույթներ իրականացնող մարմինների կողմից, թե՛ հանրության կողմից վերահսկողությունը դառնում է պարտադիր գործառույթ, որի գործիքակազմը, իր հերթին, պետք է լինի հասկանալի, հստակ սահմանված և տեսանելի (թափանցիկ):

Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողությունն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանրային

ֆինանսների կառավարման գործընթացում մասնավոր շահը փոխարինվում է հանրային շահով, ինչի արդյունքում ընդգծվում է նաև վերահսկողական գործառույթների կարևորությունը և արդիականությունը:

Վերը շարադրածը արդիական և պահանջված է դարձնում ատենախոսի հետազոտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսը իր աշխատանքում առանձնացրել է հետևյալ հիմնական **նպատակը՝** մշակել և ներկայացնել Հայաստանի Հանապետությունում հանրային ֆինանսների կառավարման ոլորտի վերահսկողության համակարգի կատարելագործման ուղիներ:

Հետազոտության նպատակից բխում են ատենախոսի **առաջադրված խնդիրները**, որոնք հետևյալն են.

- ուսումնասիրել հանրային ֆինանսների տեսական հիմքերը և կառավարման գործընթացը, վերլուծել տեսական ընկալումները և միջազգային փորձը,
- վերլուծել բյուջետային գործընթացի օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ հիմքերը և գործիքները ՀՀ-ում, բացահայտել ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները,
- մշակել բյուջետային ծրագրերի և միջոցառումների դասակարգման նոր մոտեցումներ և կառուցակարգեր՝ դրանց իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողության համակարգի բարելավման նպատակով,
- առաջարկել բյուջետային միջոցառումների արդյունքային ցուցանիշների մշակման նոր եղանակներ և մոտեցումներ՝ դրանց նկատմամբ արդյունավետության վերահսկողության իրականացման նպատակով,
- ներկայացնել պլանավորման փուլում վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները,
- հանրային ֆինանսների կառավարման համատեքստում դիտարկել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը, բացահայտել դրանց նկատմամբ վերահսկողության գործընթացի հիմնախնդիրները,
- մշակել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման

գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստի ծավալը կազմում է 133 էջ՝ առանց հավելվածի:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի տեսամեթոդական հիմնահարցերը»** գլխում հեղինակը ներկայացրել է հանրային ֆինանսների կառավարման ոլորտը՝ որպես տեսական և մեթոդաբանական հիմք և ուսումնասիրել է դրա զարգացման ընթացքը, բացահայտել է հանրային ֆինանսների կառավարման գործընթացի էությունը: Բացի այդ, հետազոտության առաջին գլխում ատենախոսը ներկայացրել է հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության գործընթացի էությունը, կիրառվող գործիքակազմը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում հեղինակը վերլուծել է Հայաստանի Հանրապետությունում բյուջետային միջոցառումների համար արդյունքի չափորոշիչների սահմանման գործընթացը, այդ ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները, ՀՀ-ում կիրառվող բյուջետային վերահսկողության համակարգը և պլանավորման փուլում վերահսկողության հիմնախնդիրները: Որպես առանձին տիրույթ, հեղինակը դիտարկել է հանրային ֆինանսների վերահսկողության հիմնախնդիրները պետական բաժնեմասով (կամ պետական մասնակցությամբ) առևտրային կազմակերպություններում, ներկայացնելով այդ ընկերությունների կառավարման, ֆինանսավորման և գործունեության վերահսկողության առանձնահատկությունները և պետության ու ընկերությունների կառավարման մարմինների միջև փոխհարաբերություններով պայմանավորված գործընթացները:

Ատենախոսության երրորդ՝ **«Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի կատարելագործման ուղիները»**

գլխում հեղինակի կողմից ներկայացված են բյուջետային միջոցառումների նոր դասակարգումը և արդյունքի չափորոշիչների սահմանման հիմնական մոտեցումները, բյուջետային պլանավորման փուլում վերահսկողության իրականացման մասին մոտեցումներն ու առաջարկությունները, ինչպես նաև, ածանձին ենթագլխով, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողության իրականացման մասին առաջարկությունները:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը և դրանց գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունը առանձնապես արժեքավոր է գիտական նորույթների կարևորության տեսանկյունից, որոնք մասնագիտական հիմնավորվածություն ունեն, և դրանց կիրառման դեպքում էականորեն կարող են բարելավել ՀՀ-ում բյուջետային գործընթացը և բյուջեների կատարման (ներառյալ միջանկյալ հաշվետվողականության և մշտադիտարկման) գործընթացները: Սա կնպաստի պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, նպատակային թիրախներին հասնելու գործընթացի վերահսկողության սահմանմանը, բյուջեներով նախատեսված միջոցառումների, ծրագրերի վերջնարդյունքների և հսկողության գործիքակազմի ճիշտ սահմանմանը և վերահսկողության գործիքների կիրառմանը՝ ծրագրերի իրականացման ամբողջ ժամանակահատվածում:

Հեղինակի կողմից վեր են հանվել ՀՀ-ում հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողություն իրականացնող մարմինների թերությունները՝ ինչպես օրենսդրական նորմերով պայմանավորված, այնպես էլ գործառութային, ինչի հետևանքով տուժում է հանրային ֆինանսների օգտագործման արդյունավետությունը և դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

Հանրային ֆինանսների կառավարման գործընթացի և վերահսկողության համակարգի կատարելագործման վերաբերյալ հեղինակի առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների (ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, մյուս ոլորտային

պետական մարմինների) կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատող մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է նաև նրանով, որ որպես հետազոտության հիմք ծառայել են ՀՀ-ում ընդունված իրավական ակտերը, պետական բյուջեները և դրանց փաստացի կատարողականները, որոնց ուսումնասիրության և արդյունքների հիման վրա էլ հեղինակը կառուցել է իր առաջարկությունները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

✓ մշակվել է բյուջետային ծրագրերի և միջոցառումների նոր դասակարգում, ինչը հնարավորություն կտա ապահովել այդ ծրագրերի ֆինանսական գնահատականի և դրանց հաշվարկների հիմքում դրված բաղադրիչների միջև կապը,

✓ առաջարկվել են բյուջետային ծրագրերի և միջոցառումների համար արդյունքային ցուցանիշների սահմանման և գնահատման նոր մոտեցումներ, որոնք կնպաստեն ինչպես ծրագրերի կանոնավոր գնահատմանը, այնպես էլ դրանց արդյունավետության նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը,

✓ վերահսկողությունը դիտարկելով որպես կառավարման յուրաքանչյուր գործառույթի նկատմամբ իրականացվող գործընթաց՝ ներկայացվել է բյուջետային միջոցառումների պլանավորման փուլում վերահսկողության իրականացման մոտեցում՝ միջոցառումների յուրաքանչյուր խմբի համար վերահսկողության իրականացման ուղղությունների մշակմամբ,

✓ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների դերը դիտարկվել է հանրային ֆինանսների կառավարման համատեքստում, մշակվել են դրանց կողմից հանրային ֆինանսների ներգրավման և կառավարման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման հիմնական ուղղությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ և թերություններ, որոնցից հիմնականներն են՝

1. Ատենախոսության 3.1՝ «Բյուջետային միջոցառումների նոր դասակարգումը և արդյունքի չափորոշիչների սահմանման հիմնական մոտեցումները» ենթագլխում (էջեր 98-99) հեղինակը առաջարկում է աշխատանքի արդյունավետության ցուցանիշի և ծախսերի արդյունավետության ցուցանիշի հաշվարկման իր մոտեցումները, որոնք տեսականորեն ընդունելի են: Սակայն, ցանկալի կլիներ որպեսզի իր կողմից ընտրված՝ բյուջետային միջոցառումներից մեկի կամ մի քանիսի օրինակով ցուցադրվեին այդ գործակիցների կիրառման արդյունքները և դրանով իսկ բացահայտվեր առաջարկվող չափորոշիչների անբավարար վիճակը ներկայումս իրականացվող միջոցառումների համար:

2. Պետական սեփականությամբ առևտրային կազմակերպությունների (ատենախոսության 3.3՝ «Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողության իրականացման ուղղությունները») վերաբերյալ ներկայացված ֆինանսական վերահսկողության ուղղություններից մեկը պետական բյուջեի եկամուտների ավելացման նպատակ է հետապնդում (էջ 118), սակայն հեղինակը չի դիտարկել վերջին մի քանի տարիներին այդպիսի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված շահութաբաժինների մեծությունը, դրանց ավելացման կամ պակասեցման միտումները, ինչը թույլ կտար ճշգրիտ գնահատել գոյություն ունեցող ֆինանսական վերահսկողության մեխանիզմների անկատարությունը՝ քանակական արտահայտությամբ:

3. Նախորդ դիտողության համատեքստում, կարծում ենք, որ հեղինակը պետք է գնահատական տար ՀՀ-ում առևտրային կազմակերպություններում պետական սեփականության պահպանման նպատակահարմարության վերաբերյալ հետևյալ տեսանկյունից. արդյո՞ք համարժեք են պետության կողմից իրականացվող ներդրումները այն հատույցին (շահույթին), որը ստանում է պետությունը իր սեփականությունը պահպանելով այդպիսի կազմակերպություններում: Այդ հիմնախնդրին ատենախոսը անդրադառնում է աշխատանքի էջ 121-ում, սակայն առանց ներկայացնելու ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և բացասաբար չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Սարգիս

Խաչատուրի Թևոսյանի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, գիտական արժեք ու գործնական կիրառման դաշտ, ինքնուրույն հետազոտություն է, որի շրջանակներում հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածներում, որոնք պարունակում են գիտական նորույթի դրույթները: Հոդվածները ներառված են ատենախոսության սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Սարգիս Խաչատուրի Թևոսյանի «Հանրային ֆինանսների կառավարման ոլորտում վերահսկողության համակարգի բարելավման հիմնական ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ Է.Ն.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԷԼՅԱՆՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն.Հ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

21 մայիսի 2026թ.